



ԵՂՎԱՐՂԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF YEGHVARD

ք. Եղվարդ, Երևանյան 1.
հեռ. (+374) 224 22933, 094331055
Էլ փոստ: info_yeghvard@aarhus.am
ruzannamanyan@gmail.com

1 Erevanyan st., Yeghvard c.,
Tel. (+374) 224 22933, 094331055
E-mail info_yeghvard@aarhus.am
Web www.aarhus.am

№ Ա-62

18.05.2015թ.

Նաիրիի բժշկական կենտրոնի տնօրեն՝ Ա. Նազարյանին
Եղվարդի Օրհուս կենտրոնի համակարգող
Ռ. Մանյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Նազարյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1 հոդվածների, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք Եղվարդի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Նաիրիի տարածաշրջանում, մասնավորապես Եղվարդ քաղաքում, 2015թ. հունվար – մայիս ամիսների ընթացքում շների կողմից մարմնական վնասվածք ստացած որքան մարդ է դիմել Նաիրիի բժշկական կենտրոն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում ենք մեր հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջվող տեղեկատվության/30 օրյա ժամկետ/:

Կազմակերպությունը պատրաստ է տեղեկության պատճենահանման յուրաքանչյուր էջի համար վճարել 10 դրամ կամ տրամադրել որևէ կրիչ՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկության ստացման համար (եթե տրամադրվող տեղեկատվությունը գերզանցում է 10 էջը):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղվարդի Օրհուս կենտրոնի
Համակարգող Ռ. Մանյան